Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2019 թվականի դեկտեմբերի 27-ի ընդլայնված նիստի N 5 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Ատենախոսությունների թեմաներ և գիտական ղեկավարներ հաստատելու մասին հարցը:**

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ **Թ.Մ.ՄԿՐՏՉՅԱՆ:**

ԼՍԵՑԻՆ.- **Կառավարման ամբիոնի** դոկտորանտ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **ՍԱՐԳԻՍ ԱՐՄԵՆԻ ԱՍԱՏՐՅԱՆՑԻ** դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման մասին հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- **Ս.Ա.ԱՍԱՏՐՅԱՆՑԻ** դոկտորական ատենախոսության թեման հաստատել հետևյալ վերնագրով՝ **«Բարձրագույն կրթության ֆինանսավորման հիմնախնդիրները տնտեսական զարգացման համատեքստում (ՀՀ նյութերով)»** «Տնտեսագիտություն» բնագավառի **Ը.00.02՝ «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»** և **Ը.00.03՝ «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»** մասնագիտություններով:

ԼՍԵՑԻՆ.- **Կառավարման ամբիոնի** դոկտորանտ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **ՍՈՍ ՎԻՐԱԲԻ ԽԱՉԻԿՅԱՆԻ** դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման մասին հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- **Ս.Վ.ԽԱՉԻԿՅԱՆԻ** դոկտորական ատենախոսության թեման հաստատել հետևյալ վերնագրով՝ **«ՀՀ տարածական զարգացման հիմնախնդիրները»** «Տնտեսագիտություն» բնագավառի **Ը.00.02՝ «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»** մասնագիտությամբ:

ԼՍԵՑԻՆ.- **Կառավարման ամբիոնի** նախկին հայցորդ **ՆԱԻՐԱ ՌՈՒԲԵՆԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ** թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի վերահաստատման մասին հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- **Ն.Ռ.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ** ատենախոսության նախկին թեման՝ «Կառավարչական վերահսկողության արդյունավետությունը պետական կառավարման համակարգում (ՀՀ նյութերով)» Ը.00.02՝ «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ, (հաստատվել է գիտական խորհրդի՝ 2011 թվականի հունիսի 15-ի նիստում, արձանագրություն N 11) վերահաստատել հետևյալ վերնագրով՝ **«Պետական կառավարման մարմինների վերահսկողության և աուդիտի կատարելագործման ուղիները ՀՀ-ում»** «Տնտեսագիտություն» բնագավառի **Ը.00.03՝ «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»** մասնագիտությամբ:

Գիտական ղեկավար, **ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր ՅՈՒՐԻ ՄԻՔԱՅԵԼԻ ՍՈՒՎԱՐՅԱՆԻ** փոխարեն **Ն.Ռ.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ** ատենախոսության գիտական ղեկավար վերահաստատել **տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր ԼԻԱՆԱ ՀԱՅԿԱԶԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ (Ը.00.02, Ը.00.03):**

ԼՍԵՑԻՆ.- **Տնտեսագիտության տեսության ամբիոնի** հեռակա անվճար ուսուցման համակարգի երրորդ տարվա ասպիրանտ **ՄԻԼԵՆԱ ՍԱՄՎԵԼԻ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ** թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավարի վերահաստատման մասին հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Գիտական ղեկավար, **տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր ԱՐԾՐՈՒՆԻ ԵՐՋԱՆԻԿԻ ԹՈՐՈՍՅԱՆԻ** փոխարեն **Մ.Ս.ԱՂԱՋԱՆՅԱՆԻ** ատենախոսության գիտական ղեկավար վերահաստատել **տնտեսագիտության թեկնածու, դոցենտ ՄԻԽԱՅԻԼ ՆԱՎԱՍԱՐԴԻ ԹԱՎԱԴՅԱՆԻՆ (Ը.00.01):**

Մ.Ս.ԱՂԱՋԱՆՅԱՆԻ ատենախոսության թեման՝ **«Ներդրումային քաղաքականության բարեփոխումների արդի հիմնախնդիրները ՀՀ-ում»** «Տնտեսագիտություն» բնագավառի **Ը.00.01՝ «Ընդհանուր տնտեսագիտություն»** մասնագիտությամբ, հաստատվել է գիտական խորհրդի՝ 2017 թվականի հունիսի 15-ի նիստում (արձանագրություն N 11):

ԼՍԵՑԻՆ.- **Բանկային գործի և ապահովագրության ամբիոնի** հեռակա անվճար ուսուցման համակարգի առաջին տարվա ասպիրանտ **ՀԵՐՄԻՆԵ ՍԻՄՈՆԻ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԻ** թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավարի վերահաստատման մասին հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Գիտական ղեկավար, **տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր ԱՆՆԱ ԼԵՎՈՆԻ ԱՍԼԱՆՅԱՆԻ** մահվան պատճառով **Հ.Ս.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԻ** ատենախոսության գիտական ղեկավար վերահաստատել **տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր ԼԻԱՆԱ ՀԱՅԿԱԶԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ (Ը.00.02, Ը.00.03):**

Հ.Ս.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԻ ատենախոսության թեման՝ **«Ֆինանսական տեխնոլոգիաների ազդեցությունը վճարահաշվարկային ծառայությունների արդյունավետության վրա (ՀՀ նյութերով)»** «Տնտեսագիտություն» բնագավառի **Ը.00.03՝ «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»** մասնագիտությամբ, հաստատվել է գիտական խորհրդի՝ 2019 թվականի ապրիլի 30-ի նիստում (արձանագրություն N 11):

ԼՍԵՑԻՆ.- **Բանկային գործի և ապահովագրության ամբիոնի** հեռակա անվճար ուսուցման համակարգի առաջին տարվա ասպիրանտ **ԳՈՀԱՐ ՎԱԼԵՐԻԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ** թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավարի վերահաստատման մասին հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Գիտական ղեկավար, **տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր ԱՆՆԱ ԼԵՎՈՆԻ ԱՍԼԱՆՅԱՆԻ** մահվան պատճառով **Գ.Վ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ** ատենախոսության գիտական ղեկավար վերահաստատել **տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր ԱՐՄԵՆ ԱՇՄԱՏԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ (Ը.00.03):**

Գ.Վ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ատենախոսության թեման՝ **«Ֆինանսական ռիսկերի ապահովագրության զարգացման ուղղությունները ՀՀ առևտրային բանկերում»** «Տնտեսագիտություն» բնագավառի **Ը.00.03՝ «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»** մասնագիտությամբ, հաստատվել է գիտական խորհրդի՝ 2019 թվականի ապրիլի 30-ի նիստում (արձանագրություն N 11):

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Թ.Մ.ՄԿՐՏՉՅԱՆ**

2019 թ. դեկտեմբերի 27
Երևան